


ՊԱՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Թր
Տարեկան	6 »
Վեցամսեայ	»
Արտասահմանի համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Աւերիկայի համար	3 սր.
Տարեկան	1.50 »
Վեցամսեայ	»

Դասնորոգման տարի ստանալիս երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. հ. երեսին աւելի սնկաւնեւում համար 20 0/0 զեղչ կը ըլլայ:

Վստնայի համար մի օր 10 սանթիմ



R. P. Kalmencarian, Mechidharistengass, W. 4. (Austria)

Նախկին և նոր գրիչի կարգադրութեան համար

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
 մեկ օր (20 ՍԱՆԹԻՄ.)
 Պուշկարիոյ համար
 մեկ օր > 15 ՍԱՆԹԻՄ <

Գրութիւնք և ս չեն տրուիր

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՈՒՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՎՈՒԹ ԶՈՐԵՔԻՄԱՐԹԻ ԵՒ ՇՆԱՐԹ ՕՐԵՐԸ

«ՇՆԱՐԹ»-Ի ԲԱՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒՄԸ ԳԵՏԻ Է ԿԱՆՈՒԿ ՎԵՐԻՆ

ՆՈՐ ԱՒՍՁ ԿՈՒԹԻ Ն

«Տան» լրագիրը հարգում է որ ուսական կառավարութեան մի նոր հրամանով հայ լուսաւոր չափան կեկեզեցիները բոլոր կաւաւանները և դրամագրութեանը անցնում են պետութեան կըրթական նախարարի ձեռքը և մտնում նոյն նախարարութեան բիւրօէի մէջ:

Մի նոր և մեծ աւազակային քայլ, որով ճերմակ ծարիր կաւաւարութիւնը թաւանում է կովկասի հայերին: Մի վայրենի քայլ, որի նմանը այդպէս բացարձակօրէն չի կատարել թուրքերի կարծիք Սուլթանն անգամ:

Սրանից յետոյ երբէք չենք զարմանալ, եթէ մի օր լսենք որ նոյն կառավարութիւն յափշտակել է և հայերի անհատական հարստութիւնները, սեփականութիւնները, ծարր և իր կառավարութիւնը ամեն բանի ընդունակ են:

Ռուս կառավարութեան կողմից կատարված այսպիսի անխիղճ աւազակութիւն տեղի ունեցած միջոցին, իսկոյն մեր աչքի առջև է գալիս մեր դիւստագէտ Չերազ աղբարը... իր ուսումնալից թեման ամբողջ յիմարութեամբ ըլլալով անհամբեր սպասում ենք լսելու Չերազի կարծիքը առաջին այս նոր գաղաւթութեան հանդէպ. սպասում ենք որ թէ այն պատճառով որ Չերազ աղբարի կարծիքը մեծ նշանակութիւն ունի, այլ հասկնալու համար թէ Չերազ որչ. փ ընդունակ է զգա՞նք իր ազգի հանդէպ կատարված այսպիսի մի քաղաքական մեծ ոճրագործութեան առջև:

40070

ԵՐԿՈՒ ՆՈՒՄԱՆԵՐԸ

Այսօր սպագրում ենք անցեալ համարում խոստացած կարծիքը նամակները:

Մի բերիք

Ան ուշ իմացաք որ Մշոյ նոր ընտիր կառավարիչ Մանուէլ փաշան ամսուս Յին անգլ ժամանեց և իր գործին ձեռնարկեց. քանի մը անգամ առիթ ունեցաւ նորին վտնուութեան հետ տեսնուելու. իր փափակ պաշտօնի քովանդակ ծանուցութիւնը պահողը, ուսեալ, ուղղափառ և ազգեցիկ անձնաւորութիւն մըն է. ուր պաշտօնը կատարած է ամէն կերպով զոն թողած է ազգային հասարակութիւնը: Իր սկզբունքն է առանց ցեղի և ազգի խարսխութեան գործել, որպէսզի ամէն ոք իր պաշտօնակատարութեան օրով հանգիստ ապրի և իր լրաւանց պատուով և ինչից տէր ըլլան: Այսպիսի դեղեցիկ մտածումներով սողորուած մէկը, բնական է, որ երկրի խաղաղութիւնը և ժողովրդի հանգիստը վրդովող անձերը սաստկապէս պէտք է հարուածէ, որով միայն կարելի է հասնել բազմացեալ նպատակին:

Արդար լինելու համար, պէտք է խոստովանել, որ այսպիսի եզակի կառավարիչ մը ունենալը Մշոյ վիճակի ժողովրդեան համար, բարեբաղուցիւն մըն է:

Երբ մենք մտաւի իրազեկ ենք իր բարի տրամադրութիւններուն և օգտակար ձեռնարկներուն. ձեզի ալ յորդոր կը կարգանք, որ ստանց տարբեր համոզումի և երկբայանաց վստահիք մեր խորհուրդներուն և հաստատական պարտականութեանց հաստատիքը կրկին ցոյց տաք, ո՞չ ապաքէն ըստ մեր կարծեաց. ձեր ալ առաջին և միակ նպատակը ըլլալու է ժողովրդին հանգստութիւնը և անդորրութիւնը, ընդ բարձր հո վանաորութեան Օսմանեան թաւրխնամ կառավարութեան: Ուրեմն առիթը, որ բարեգէպ է, ներկայացած է հորի է, որ օգտուիք ի շահ և յօգուտ մեր ազգակիցներուն: Որովհետեւ ձեր այդ գիրքն ու կացութիւնը հակառակ է մեր վեհափառ կայսեր բարձրագոյն կաճաց, ուստի նորին վեհափառութիւնը աւելի ուրախ և գոհ կը մնայ. եթէ փութաք ժամ առաջ վերջ տաք այդ անհաճոյ ընթացքուող և ապաւինիք իր զթութեան ու չնորհացը. դառնաք ձեր ընտանեաց քով, ապրիք աշխարհի վրայ իրիւս պատուաւոր քաղաքացիք և պարկեշտ անձնաւորութիւններ, կատարէք ձեր պարտականութիւնները առ եկեղեցին և առ սէրութիւնը: Ձեր եղբայրներու նիւթական և բարոյական շահն այդ կը պահանջէ: Այլ

բաւական է անոնց կրած նեղութիւնն ու զրկանքը:

Սերբիք, իմ նպատակս է օգտակար ըլլալ պաշտօնիս մէջ և չտեսնել այլևս այս խժոճութիւնները, որոնց մեծագոյն թասար եղաւ մեր ժողովուրդը և եթէ երբէք յամառիք ձեր այդ վարմունքին մէջ, ո՞վ գիտէ ի՞նչ անլուր և զարհուրելի վշտիւր ու ցուեբու պիտի ենթարկուին նորին: Պէտք է որ վերջանան բարձրագոյն կամաց հակառակ եղող երեսօթիւնները և գործեր որպէսզի իրերը կրկին իրենց հինաւուրց ուղղութեամբ դառնան:

Իրաց գծուար և ցաւալի վիճակը ներկայացնելով ձեր սիրելութեանց, նպատակ ունինք զձեզ մեր վեհափառ կայսեր շնորհացն արժանացնել և առ այս կարեւոր գիտութիւն պիտի ընենք կառավարիչ փաշայի միջոցաւ, եթէ դուք համակերպութիւն և հրեշտակութիւն ցոյց տաք. Երկարաբան չեմ ուզեր ըլլալ, միայն հոյաբար կը խրատեմ, որ այս առաջարկու: Ուշով ի նկատի առնէք և ձեր կարծեաց արդիւնքը ինձի հազարգէք, որպէսզի ըստ այնի շարժիմ ու գործեմ:

Ազգովարար
 Պատր. փոխանորդ Մշոյ
 Խոսրով վարդ. Պեղեկեան
 26 սեպտ. 1902 թ.
 Մուշ:

ՊԱՍՍԱՍՆԱՆԸ

Գեր. տէր Խոսրով Մ. վարդ Պեղեկեան Պատր. փոխ. Տարօնոյ Մուշ:

Գերապատիւ Տէր

Ընդունեցինք ձեր գերապատուութեան Սեպ. 26 թւակիր պաշտօնական գրութիւնը, որով հրաւեր կարգացիք մեզ վստահել Մուշի նորընտիր կառավարիչ վտնու. Մանուէլ փաշային և անոր միջոցով գիմել վեհափառ կայսեր գիտութեան ու շնորհացը: Հակառակ պարագային երկրի շնորհակցումը մեզ և սպասույթով որ կառավարիչ փաշան սաստկապէս պիտի հարուածէ մեզ և ժողովուրդը նորին պիտի ենթարկուի անլուր և զարհուրելի վշտերու ցուեբու:

Շատ կը ցաւինք, որ դուք իբրև զարգացած և ուսեալ անձ և Հայաստանեայց եկեղեցւոյ հովիւ մը ձեր ասպնորդական պաշտօնի յերմամբը մտնել տեսած էք ձեր հօտին

անտանելի տառապանքները, բռնութիւնները, շարունակական հատուածը և թափանցած այդ բոլոր չարիքներու իսկական պատճառներն և շարժառիթները փոխանակ քաջ հովի պէս ձեր անձը ձեր ինքնուր յանձնուած տարաբախտ ժողովրդի վրայ այդ տարապայման և հայաջինջ ուղղութեան դէմ բողոքելու, ուր որ անկ է, սխալ մտածումով և քայլով մը մեզի կը դիմէք և կատարէք զմեզ անգամ մը ևս կրկնելու ինչ որ հարեւաւոր անգամներ ըրած ենք նոյնը:

1. Մեր արդի գիտած ապստամբական դրութիւնը չէ թէ՛ պատճառ է մեր ազգի այժմու ներկայ դժբախտ վիճակի այլ ուղղակի ձեռուդ գարեբով կրած անարգարութեանց, անպատուութեանց, մասնակի և ընդհանուր չարիքու եւայն:

2. Մենք նախքան այս ապստամբական դրութեան մէջ մտնելու ամեն տեսակ իազազ միջոցներու գիմելինք, հատուցելու օսմանեան կառավարութիւնը, թէ հայր, որ դարձրով հաստատիւ մնացած էր իրեն և զլիսուոր սատարն էր եղած երկրին բարգաւաճման և զարգացման իրաւունք ունէր ինքն ալ իսլամներու հետ հաստատ նկատուէր օրէնքի առջև և անոնք ապահովէին անոր կեանքը, պատիւն ու ստացածքը, ինչ որ կը պահանջէր նաեւ երկրի շահն էլ:

3. Եթէ այսօր իազազ միջոցներէն գիմելէ յուսահատ կաշխատիք բռնի ուժով ձեռք բերել ինչ որ կը զբաւցուի: Մի կարծէք թէ նպատակ ունինք քայքայելու օսմանեան կառավարութեան ամբողջութիւնը, այլ զէնքի ուժով կրողքենք ամբողջ երկրի մէջ թագաւորող ներկայ վատթար կարգերուն լէժիմին դէմ, որոնց բուն նպատակն է բնաջինջ անել հայութիւնը, կը բողոքենք այն դեղծ և անխիղճ մեծ ու փոքր պաշտօնեաներու դէմ, որոնք կրկին կողմ կը վխտան և վայրագօրէն կը գործեն ու կը շարչարեն ամենատարական իրաւունքներէ իազազ հայ ազգաբնակչութիւն: Կը բողոքենք այն անխիղճ և արինկզակ ցեղերու և հրոսակներու դէմ, որոնք կառավարութեան թոյլաւորութեամբ և թեկադրութեամբ անեն սեղ և ամէն կողմ կը բռնան հայութեան վերայ և անպատիժ կերպով կսպանեն, կը թալանեն և կանապաւեն:

4. մենք պիտի շարունակենք մեր սկսած սրբազան կուրը մինչև որ յաջողենք մէջտեղէն վերցնել այս վայրենի լէժիմը, գրգիր պաշտօն

կեանքին վրայ, ինչպէս որ կառավարութեան մը գոյութիւնը քաղաքացիներու վրայ, կենսութեան ազգին գործարաններու թիւն մը ուրիշ բան չէ, բայց եթէ գաշակցութիւն մը անհասանելի է, գաշակցութիւն մը բնական զորմանաւորութեանց որոնք միացած են սերտ ընկերակցութեամբ, կ'ընթացէ այդ ընկերակցութիւնը բազմապիսեան, ամբողջ կանուանէր, քան ազգ կոչած է: Ուրիշ իմաստաւորներ գործարանաւորութիւն մը նմանըցած են բազմաբնի ստանի մը, սեռակ մը սպաս քաղաքի որ իր ինքնութիւնը անհասանելիութիւնը ունի, և որուն քաղաքացիները կազմիչ մասնիկներն են:

Եթէ այդ ընկերակցութեան կամ գաշակցութեան կազմիչ մասնիկներու գործունէութիւնը առանձին չկատենք, կուենանք սարսակակն կեանքը, իսկ եթէ բոլորին գործունէութիւնը միասին գրեւոր կուենանք ընդհանուր կեանքը:

Մասնական մանր բնիկն առանձին ներկայացուցած կենսական երեւոյթներու դադարն է, իսկ ընդհանուր մանր ամբողջ ընկերակցութեան, գաշակցութեան, քաղաքին կամ ազգին յատկ բերած երեւոյթներուն կանգ առնելն է:

Այս քաղաքացիութիւնները ցոյց կուտան թէ, ընդհանուր կեանքը կախողած է մասնաւոր կեանքերէ, գործարանաւորութեան կազմիչ տարրերու: Բնիկներու կեանքերէն, եթէ կազմիչ տարրերը բոլորը մեծնին, այլևս սղղը, գաշակցութիւնը կամ ընկերակցական էակը գոյութիւն ունենալէ կը գաղտնի: Բնիկներն այդ ուստանը խիստ բազմաբնի է: Մարդու մարմինը միջին հաշուով 30 միլիոն բնիկ կը պարունակէ, որոնք այդ ուստանին քաղաքացիներն են: Մեծ մասը բոլորովին հաստատած բնակութիւն մը ունին, պաշտօն մը կամ յատկութիւն մը ունին, որոնք տեղ մը գրաւած են և հոն կ'ապրին ու կը մեռնին:

15 Յունիս 1903
Ֆիլիպպէ

ՏՊԱՒՈՐՈՎԹԻՒՆՆԵՐ
ՖԻԼԻՊՊԷՆԻ ԹԱՆԱՅԻՆ ՎԱՐՄԱՐՄԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆՔԵՍԷՆ

Վարժարաններու տարեկան շրջանը լրացաւ: Ամէն տարի առ ատենն է որ ընդհանրապէս վարժարաններու շուրջը կը դառնան թերթերը, և ատի բնական է: Չենք կրնար չի փափաքել որ քննադատական կամ քաջախիտ, կան առ տողերու շարքին մէջ, ֆիլիպպէի կրթական դործը սլ իր որոնք տեղը ունենայ, երեւան գայ իր լաւ կամ գէշ կողմերով: Եւ ֆիլիպպէի կրթական գործը կրկնակի առաւելութիւն մըն ալ կը ներկայացնէ — երկու վարժարաններու գոյութիւնը՝ օգտակարութեան և արդիւնքի համեմատական շատութենէն զատ, տեսակ մըն ալ կ'ընէ, մէկ կամ միւս վարժարանին գերակշռութիւնները ի յայտ բերելու: Արքան ալ ընդհանուր ամենամեծ դժուր կողմեր ունենայ իսկ

զային վարժարանները մատակարարելու պարտականութիւնը քան ձեռնդնելու ճիգերը և սակայն մեղի համար անձանթ չէ որ, թաղային վարժարանի ուսուցչական մարմինը, իր ներկայ կողմով, բացառութիւնը յարգելով և միեւնոյն ատեն հաշիւի առնելով տղից նկարագրներով — պատուելիներու, ծուլութեան, թեթեւօրէնութեան օրինակ վարժապետներու, փոխօրէն քրտրիկի հերոսութիւնը ներկայացուցիչներու մեծամասնութիւնը, համարուած է ինքն իր վարժարանը չի պիտի կրնար տալ փափօքուած արդիւնքը:

Եւ ատի զգացած ու խոստովանած ալ են մասնախումբին կամ հոգաբարձութեան մէկ երկու հասկացող անդամները:

Այս ցոյց սուս ակէ 15 օր առաջ տեղի ունեցած վարժարանական տարեկան հանդէսը: Մ'չ առանգական ծիծաղելի և վնասակար քննութիւնները ո'չ ալ վարժարանական հանդէսները կրնան բնականաբար վարժարանին մտաւորակները, ներքինը մանրամասնօրէն ներկայացնել բայց ատենք կըրնան ընել բան մը — կրնան ցոյց տալ գոնէ վարժարանին մէջ տարուան մէջ առանդուածը իր թերի կամ անթերի վիճակին մէջ ընդհանուր գծերով, ինչպէս նաև վարժարանին ուղիւ թիւնք և Ո. Գիւն:

Եւ առ անսակէ էն նայելով լաւ տպաւորութեան տակ չէ որ մեկը նեցալ հանդէսէն:

Մեծ աղաքը գրեթէ բան մը չսին աչքի վարժող, բացի քանի մը աննեղաշնակ երգերէ: Երեսօձերմիջնելու միակ յոյսերնին — ուսուցիչներու կարծիքով թերեւս — մանկապարտէզի փոքրիկ ներն է ին, որոնք ոտանաւորներ ըսին, երգեցին, պարեցին:

— Կը օրուն — ըսէին թերեւս միայն կապկային ձեւակերպութիւններէ յափշտակողները — աչք օրուն: մարդիկը թա' մ վարժարանն են եղբ, չօժուները պիւլպիլի պէս կը խօսին, կը թռչտին, աղբա'ր:

Եւ իսկապէս, հոն տեսնուեցան ընդունակ, յաջող սղաքներ, Բայց դէպի ո'ր կը մղուի այդ ընդունակ մատուղ մտքերը, հոս է խնդիրը:

Մեր սղնուսփայլ մանկապարտիկանուհիները ամբողջ ճիգերնին թափել էին տղաքը վարժեցնելու աւելորդ ձեւերու, աւելորդ ձեւակերպութիւններու և մասնաւոր հոգ տարածէ ին սչք շլացնող արտաքին զարդերու: Բանն է՝ որոնք տղոց վրայ շատ զէչ ազդեցութիւն ունին: Միայն «վարժ» ու «բոլբան» կը պակսէր, ան ալ անոր համար որ քննադատած են և կը վախնան:

Եւ ըսի թէ աւելին չենք կրնար սպասել անանկ կրթիչներէ, որոնք «վարժ» «բոլբան» մասնաւորէն են, ոչ թէ իրենց այժմեան ճիգերն:

Պակասը, սերտ ծակող պակասը որ կար, տղոց և հանդէսին մէջ տիրող ոգին էր: Ազգային ներկայ կեանքը, դէպի հայ թշուառութիւնը կատարելապէս անգրտակից պահած են տղաքը և ատանկ ոգի չկար բնաւ: Մինչեւ վերջ մուկէն կատուէն անդին շտեցաւ: Տիրողը աւ էր: Եւ առաջ չի վարժացնող զիս, երբ կիմանամ որ «Վարիպո» գրուածքներուն պոլկարեքէն թարգմանութիւնը կարգիլուի աշակերտներուն կարգալ, իրեւ անպէտք և անտեղի բաւ...

Առանց Պ. Պ. Թէլլալեանի տեղեկագիրը գոյութիւն ունեցած լլալու, թերեւս խճճուէի քննադատութիւններու մէջ, բայց պ. Թէլլալեան բարեբաղդաբար յայտնեց շատ բան անկեղծապէս, և ապահովեմ որ աւելին պիտի ըսէր, եթէ իր հոգաբարձուի դիրքը ներէր: Պ. Թէլլալեան շրջանի մէջ իր ըրած ճիգերուն միացնելով իր կարծիքներն ալ, ցոյց տուաւ որ սրտը չափով հասկացողութիւն և զիտակցութիւն ունի իր ստանձնած պարտականութեան: այն ինչ, որ ինչնոր — և թերեւս իր ընկերներէն շատեր — թաղական կամ հոգաբարձուի մը պարտականութիւնը մէկ երկու շաբաթ անգամ մը ուզելով — շուրջով մտղովի գալու և վերջն ալ առանց աշխատութիւններուն գործակցելու ի՞նչ ընելուն մէջ կը կարծեն...

Չգիտեմ վարժարանին նիւթական մասն, ես կը բաւականա՞նամ անոր բարոյական և մտաւոր կողմերուն ըրած քննադատութիւններով:

Պ. Թէլլալեան ուսուցիչներու աշխատութեան մասին ձեւական պարզ շնորհակալութենէ մը ետք — որուն փոխադարձաբար կողորդալի պատասխանեց մեր «սէփտիկիւմ» կրօնը — աւրել մը արեց որ:

Ըսու օր. — «ազգայնաց վարժարանը ձեռագործ չի կայ, վարժարաններու մէջ մարմնամարդ և գծագրութիւն կը պակսի, պուլկարեքէնը տրկար էր (հիմա ալ), և ինչ որ է՛ն գէշն է, յայտնեց որ վարժարաններու մէջ տիրութիւն գոյութիւն չունի:

Հիմա հարցնեմ ձեզի — անդին ի՞նչ քննա...

Ըսի թէ հոգաբարձուի հանգամանքը արգիլեց Պ. Թէլլալեանը աւելին ըսելու: Դեռ շատ բաներ կը պակսի... զեռ տղաքը փողոցները թուրքերէն խօսելու անձուներ սովորութիւնը ձգած

չեն...

Ընդհանուր հոգի վրայ, անուղղակի զիտողութիւններ ալ ըրաւ Պ. Թէլլալեան, որ կէ հեռակայնի օր, տղաքը բոլորովին սանձարձակ կը թողուն վարժարանին մէջ և կը շոյեն միշտ, թերեւս ծնողներուն խաթրը չի մնալու համար:

Հիմակ ու հիմա այսքան մեր թաղային վարժարանին մասին, յաջորդով կը դառնամ մասնաւոր վարժարանին:

Թղթակից

Ֆիլիպպէ

Ո Ի Ն Կ Ի Մ Ի Ն

Պարոն,

Ինչպէս կերեւայ մեր պատասխանը ա'յնչպիսի ազդեքէ ձեր վրայ, որ ստիպուէր էք ահագին ուրախ մը առ ձեր մտքին տեղեկելու կարգ մը եղած չեղած օձականներ ու զանաք տեղացիներու մեր վրայ: Այս մասին աւելորդ կը դատենք և և պատասխան մը տալու ձեզի, որովհետեւ մեր նախորդ պատասխանը արդէն կը պարունակէ իր մէջ ձեր այս պատասխանին ալ պատասխանը:

Միայն ներեցէք ինձի քանի մը խօսք ընել ձեր մեղի ուղղած հարցման, կըսէք ու... հետաքրքրական է գիտնալ թէ պիտի կրնա՞ք ձեր ըսածը հաստատող ուրջման պաշտօնական արձանագրութիւնը գոնէ հերքուած պատ. խմբագրութեան ցուցնելա: Սակայն, պարոն Ունկնդիր, մենք երբեք պէտք չենք պարտաւանադրութեան տետրակը շակիելու և խմբագրութիւն վազելու: Չենք հասկնար թէ ուսկից ուր հարձուածի խմբագրութիւնը միջնորդ կը կարգէք այս մասին: Արդէ օք գուք անձամբ չէ՞ք հաճեր վարժարան հրամմելու և տեսնելու ձեր ուղած արձանագրութիւնը: մի գուցէ վախնաք թէ այս կերպով ձեր դիմալը վար առնուած կը լլայ: Մի վ. խնաք, պարոն, հրամմեցէ՛ք և ձեր աչքովը տեսէ՛ք. եթէ կուզէք խոշորացոյց մըն ալ կը դնենք ձեր արամագրութեան ներքեւ, որպէս զի կարենաք աւելի լաւ կարգալ այդ արձանագրութիւնը (պիտի ըսէք թէ այս ալ ցուցամուտութիւն է, չէ՞. և գուցէ այս անգամ ալ աւելի խոշոր գիրբերով... աղատ էք)

Գալով ձեր երկրորդ հարցման, կիմացնենք ձեզ թէ այդ գործիքները հանդէսէն 4.5 առաջ արդէն զատուած էին մէկ կողմ և ամէն ուսուցիչ զիտեի թէ անոնք հանգէսին օրը սալոն պիտի տարուէին:

Չի մոռնամ ըսելու թէ ձեր պատասխանի մէջ կարեւոր կէտ մը մոռցած էիք շեշտելու: Հանդէսին օրը մեր հոգած հազուստ:

ներով զբաղելնէր վերջ, չէ՞ր արժէր քանի մը խօսք ալ մեր կօշիկներուն (Վրայ) ընէիք (արդեօք ա՞յս ալ ցուցամուրթիւն է)։ Շիտակը զգալի պակաս մըն էր այդ ձեր պատասխանին մէջ։

Մ. Յովնանեան

ՀԵՐՔՈՒՄ ՄԸ

Սուս է թէ՞ Ձիթեանի և Միսոյի հոգեհանգստին առթիւ համէն դասակարգէ և ամէն կարծիքէ ներկայ երկսեռ բազմութիւն մը գտնուած է։ Ձի հաշուելով հետաքրքրութենէ մղուած գնացող քանի մը դաշնակցականները, անդին մնացած բազմութիւնը տակն ու վրան հազիւ 50-60 հոգիի կը հասնի։ Հոգեհանգիստը ունէ ժողովրդական գոյն չունէր։ Արդէն առջի իրիկուրէն հասարակութիւնը զգուանքով կը խօսէր։ Եթէ առանձնախումբը անկեղծ էր, պարտաւոր էր նոյն բանը ընել Սապահ-Գիւլեանի համար ալ, որը դեռ հիւանդանոցն է։ Դաշնակցականները մերժած են մասնակցիլ։

Աս հոգեհանգստին առթիւ խաղցուած կատակերգութեան մասին լաւ կը լլար որ քաղաքէս գըրուէր։ Ես այսքանը պարտք զգացի յիշել։

Փիլիպէ

Ներկայ վր

ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅ ՀԱՍՍՐԱԿՈՒԹԵԱՆ

Անցեալ օրվան Փոխանորդի և թաղականութեան հրաւերի տակ ստորագրել էին մօտ հարիւր երեսուն մարդ, իսկ ժողովի ներկայացել միայն 24 հոգի։ Ներկայ եղողները այդ վերագրեցին ժողովրդանյարմար օր նշանակվելուն և սիրով համաձայնեցին ժողովը յետաձգել կիրակի օրվան։

Վաղը ժամը երկուսին ժողովը պետք է տեղի ունենայ։ Վառնայի հայ հասարակութիւնը պարտաւոր է իր իրաւունքներէն օգտվելու և անհրաժեշտաբար մասնակցելու այնպիսի մի ժողովի, որի մէջ ծեծվելու է պուլկարահայի համար ամենակարեւոր խնդիրներէն մին՝ առաջնորդական խնդիրը։

ԹԱՍՐՈՆ

Իրկայի պարտեզին մէջ Պապանեան թատերախումբը կը շարունակէ իր զուարթացնող ներկայացումները, որոնց մէջ մասնաւորապէս կը փայլի քովիկ հաճի Յակոբ, որ սկսած է ժողովրդականութիւն վաստակիլ։ Գրեթէ ամէն իրիկուն խումբ բազմութիւն ներկայ է, որ միշտ հաճոյալի

տպաւորութեամբ կը մեկնի՝ երգերէն, պարերէն և սրամիտ կատակներէն զուարթացած։ Կըսուի թէ խումբը ի մօտոյ բեմ պիտի հանէ արեւելեան օրէնէթ մը ոլուացարար այլիկը։ շատ գեղեցիկ զազափար է այս, որուն իրականացումը կը մաղթենք։

Միւս կողմէ կիմանանք թէ տեղւոյս իպիշական յունական խումբին մէկ քանի սորո արարածները՝ հայ թատերախումբին գտած ջերմ ընդունելութենէն և յաջողութենէն կատաղած՝ զայն քայքայելու ամօթալի ձեռնարկներուն գիմերեն, անկէ բաժնելու զիւրով պուլկար ծանօթ պարուհին օր. Գաթիւնան, ինչպէս նաև անոր հետ ուրիշներ։ Այս էսնաֆական ազտոտ վարմունքին համար մեր զգուանքը այնու մասնաւոր խորին է վասնզի այդ արարածներուն մէջ հայ ալ կը գտնուի։ Հայը հայուն գէմ՝ միշտ ու ամեն տեղ։ Բայց այսպէս հով ենք թէ այդ մարդոց վարմունքը ուրիշ բանի չի ծառայի բթէ ոչ Պապանեանի և իր ընկերներուն շուրջ հանրութեան համակրութիւնը աւելի եւս շատցնել և այսու անոնց հացին ճիշտ քսած բլլալ։ Թող անոնք շարունակեն ուրեմն իրենց ազտոտ գործը։

Ա Ձ Դ

Յառաջիկայ կիրակէ, 20 յունիս, Պուլկարիոյ հայոց արժանընտիր պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Վահան Մ. վարդապետ Յակոբեան հանդերձեալ է Ս. Պատարապ մատուցանել և իւր հոգեշունչ քարոզութեամբը հոգեւորապէս մխիթարել բարեպաշտ ժողովուրդը։

Չայս ի գիտութիւն կը ծանուցանեմք։

Ի դիմաց թապ. խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Գարրիկեան Յ. Մ. Յովնանեան 18 Յունիս 1903 Վառնա

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ձմիւռնիոյ մէջ, երկու շաբաթ անկողնի ծառայելով վերջ, վախճաներ է Գարեգին եպիսկոպոս Մուրատեանց։

Մուրատեանց մեր հոգեւորականութեան նշանաւոր գէմբերէն մին էր, Առաջները մեծ ժողովրդականութիւն կը վայելէր, բայց վերջին տարիները այդ ժողովրդականութիւնը թուլացաւ։

— «Թան» կը հաղորդէ որ ինչու կառավարութիւնը պիտի գրաւէ նաև հայ եկեղեցիներու կալուածները և գրամոզլուխները։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխան Ֆէրաինանտին Եւրոպա մեկնելէն յետոյ Եւրոպական թերթերու մէջ սկսան սուտ մուտրուր պատիլ իրր թէ իշխանին կացութիւնը վտնգուած է պուլկարիոյ մէջ և սոր համար ալ հեռացեր է։

Պուլկարական ժողով մամուլը կը բողոքէ այդ սուտերուն գէմ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Նշանաւոր գող ծովային նախարար Հասան փաշայի շաքէր մեներ է։ Ծովային նախարար նշանակուել է Քէլալ պէյ, որ երբեմն Հայաստանի համար նշանակված քննիչ յանձնաժողովի նախագահ եղաւ։

— Ելեւմտից նախարար Ռէշատ փաշան հրաժարական տուեր է սրովհետեւ Եւրոպէն հրամայուած է պաշտօնեաներուն գոնէ մէկ ամսական վճարել, իսկ պետական ստուկին մէջ շատ շնչին գումար մը կայ։

ՌՈՒՍԻԱ

Պետերսպուրկէն Պերլինի թերթերու կը շեռագրեն որ Պաքուէ գործարանը վրդովեցուցիչ շափեր կառնէ։ Կը վախցուի որ ըսկանին հրգեհիլ նախահորերը և գործարանները։

Նահանգապետը դրեթէպաշարուած վիճակի մէջ կը գտնուի, որովհետեւ զօրքերը սակաւաթիւն են։

— Այս լուրէն վերջը Եւրոպական թերթերը հաղորդեցին որ Պաքուի մէջ մեծ հրգեհներ կան։

ՍԵՐՊՈՒ

Թագաւորը որոշած է խիստ միջիցներ ձեռք առնել այն սպաներու գէմ, որոնք զժողո՞հ են ներկայ վիճակէն և գէմ նոր թագաւորական տան։

ՅՈՒՆԱՍՏՆ

Ձիւնորական նոր օրէնքը երեսփոխանական ժողովին կողմէն դրեթէ միաձայնութեամբ ընդունուած է, այդ օրէնքին համաձայն զահաժառանգին, զլիւտոր հրամանատարութեան կարեւոր առաւելութիւնները կը վերանան. կը կարծուի որ թագաւորը չը պիտի հաստատէ այդ օրէնքը։

ԻՏԱԼԻԱ

Անցեալ շաբաթ օրը երեկոտան ժամը 7ին Ս. Պետրոս եկեղեցիին մէջ հանդիսաւոր կերպով կատարուել է Պապին թաղումը։ Հանգուցեալին մարմինը, կարմիր մետաքոն պատտառի մէջ փաթկելով նախապէս գրեթե մայրի փայտէ շինած դագաղի, ապա անագէ և վերջապէս կաղնեայ դագաղներու մէջ, վերջը գրուել է մարմարիօնէ շիրմի մէջ ու կնքուել է։

Այս թաղումը ժամանակաւոր է, որոշեալ ժամանակէ մը վերջը Պապին մնացորդները պիտի տեղափոխուին եկեղեցիէն, մասնաւոր տեղ մը։

— Պապին հայրենակիցները որոշեր են ամբողջ աշխարհի մէջ հանգանակութիւն բանալ իրենց քաղաքին մէջ հոշակաւոր Պապին խոշոր արձան մը կանգնելու համար։

ՀՐԻԼԵՐ ԳԹՈՒԹԵԱՆ

Տեղւոյս սղքատ դասակարգին մէջ տառապեալ հիւանդաց թիւը այս միջոցիս այնչափ ստուարացած է, որ նորակազմ Աղքատ ընկերութիւնս ներկայիս մէջ բաժանորդաց վճարած երկշաբաթ վճարներով չէ կարող մինչեւ իսկ իրեն գիմող 10 0/0 աղքատ հիւանդաց ու կայտակարգ կանոնաւոր օգնութիւն մը հասցնել։

Գործ. ժողովս պարտ անձին համարեց իրաց այս ճշմարիտ վիճակը ամեն դասակարգի պատաղապնոց ուշադրութեան ներկայացնելով հրաւեր կարող լի բաժնորգագրութիւն աղքատասնամիս։

Մութ, խոնաւ և գետնափոր խրճիթներու մէկ անկիւնը նետուած թշուառ հիւանդ աղգակիցներ անհապաղ իրենց ցուց աւմոքումը միմիայն ժողովրդէն կակնկալեն։

Գործ. ժողովս լիայոյս է, որ պատ. հայ հասարակութիւնը ինչպէս ամէն առիթներու մէջ՝ յոյսալէս ներկայ զթուլեան հրաւերիս լիառատ պիտի բարեհաճին պատասխանել։

Մնամ յարգանք
Ի դիմաց Աղք. Ընկ Գործ ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Մ. Գարագաշեան Կ. Նիզալեան

ՄԱՁԻ ՆԵՐԿ

ՀՐԱՇԱԼԻ ԹԱՁՂՈՒԹԻՒԷ
Դիւեյ Պ. Ա. Զարգիսեանի
Վառնա Պուլկարիա

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна